ԱՒԱՐԱՑՐԻ ԱՂԲԻՒՐԸ։

Ո՜վ, պայծառ Արփւոյն շրջանի ծայրը
Իւր ճաճանչներով փշոց պէս փայլեց,
Զիւնապատ լերանց և կատարները
Վսեմ շողշողուն՝ ցօղեր տարածեց։

Շաղը եթերին՝ մռայլուն զիմք
Դէպ յիւր կայանը սլացաւ երկրից,
Երկրի բոյսերը ծաւոմք և ծաղկք՝
Իւրեանց քօղերը բարձին երեսից։

Երկիրը սթափուեց բնութիւնն արթնացաւ
Եւ արշալուսին տուեց ողջոյնը.
Ամենայն ոգիք զօրութիւն առան,
Եւ զուարթերես բաց եղև գոյնը։

Եւ ես սթափուած՝ աղբիւրի եզրում՝
Ինձ մի ապշելի զօրութիւն ազդեց.
Բայց այն տեսարան իմ սրտիս խորքում
Մի ուրիշ ուրիշ զրգռմունքներ շարժեց։

Ա՛յլ որովհետև միայնութիւնը
Ստիպեց ուժգին՝ չկարացի ժուժել,
Ցանկարծ մի հառաչ դէպ ի աղբիւրը
Թարգմանիչ լեզուաւ սկսայ պատմել։

Ա՛յդ ի՞նչ կարմրորակ համոզիչ . . թփեր
Անթիւ պճրանքով և հազար և բիւր,
Եւ դու նազաքայլ շարժումես խաղեր
Ա՛յդ քաղցրակարկաչ հոսանքով աղբիւր։

Քո չորեքկուսիդ իրր անմահութեան
Արել ես զմայլուն զրաւիչ Եդեմ.
Եւ հողեղինի առաջի բնութեան
Սրտիս խօսումես այդպէս դէմ առ դէմ։

Դու զիտե՞ս արդեօք՝ այդ ճոխութիւնը
Ա՛յդ չքնաղ հանդէս և ամենայն տեղ
Թէպէտ պճնազարդ . . . բայց անմահութիւն
Չէ՛ ազդում սրտից այդպէս սիրագեղ։

Չէ՛, չէ՛ . . . յայտնումեմ զգայուն հոգւով,
Ա՛յդ անմահաբար պաշտելի վայրը,
Որ պճնուել է հայրենեաց ծաղկով,
Հայրենեաց արիւնն է զոցա հայրը։

Հայրենեաց արիւնն է զոցա ջրել,
Որ հոտ կնդրկի կրուրեն զոքա.
Վարդանայ արիւնն է ծաղկացրել,
Վարդագոյն զիմք փայլումեն նոքա։

Ա՜խ, ես քաջ յայտնեմ՝ թէ դու չգիտես,
Աւարայրն է սա տապան մեր Հարանց,
Մեր նահատակաց մարտին ասպարէզ,
Արդիւնք են սոքա մեր վեհ Դիւցազանց։

Որք յանուն ազգի՝ յանուն հաւատոյ՝
Անվեհեր հոգւով թափել են արիւն.
Եւ զիմագրաւ Պարսիկ – թշնամոյ
—Թէ յոյժ նուազունք՝ այլ...ցկեանքն ի բուն։

Ո՜վ, հերիք աղբիւր՝ հերիք խնդ Հայիս
Արծարծել մտքում մի տխուր անցած.
Ժուժել չկարեմ՝ թշուառ է հոգիս,
Գիտէ Բարձրեալը իմ միակն Աստուած։

Եւ զիտեմ զի դու չես իսկ զարևոր,
Մանկական ունիս դու հոսմունք պայծառ.
Եւ զի անտեղեակ խօսքիս բանաւոր,
Դու զիմ խորհրդոյս խնդիրը միտ ա՛ռ։

Զի եթէ կամիս՝ զի եթէ ցանկաս
Ճառիս վերջաբանն՝ թէ միտքդ յիշէ,
Կարող ես հեղիկ՝ ուր որ կը գնաս
Խնդրել որոնել ո՛ւր է Եղիշէ։

Նա կը պարծենայ՝ նա զուարթ զիմք
Քաջ նահատակաց ոսկերաց վերայ,
Բայց այժմ շիջեա՜ղ . . . այլ և այլ դունք
Ողբ ունի բերան այս զարուս վերայ։

Կը տեսնես նորան՝ կնճիռն ճակատին,
Նա ոգևորած՝ պատմէ անընդհատ
Տխրութեան բամբիռն... իւր ճարտար ձեռին՝
Լո՛ւր և միտ պահեա՛ զԱղդիդ յիշատակ։

Ա. Յարութիւնեան Աբգարեանց

ԱՐԱՐԱՏ։